



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 22

ՀԻՆԳԵԱՐԹԻ Զ

26 ՄԱՅԻՍ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԴԱՒԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 Ղ.բ.	Տարեկան 54 Ղ.բ.	Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԾԱՌԱՑՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՅՆՆԵՐՈՒ, ՇՂԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորելուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին :

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը խնձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹՐ՝ քե՛

Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած խնձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդէսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :

Հասը 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(کتبخانه جهان) مطبعه سی — باب طالی جاده سی ۳۸

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ԶԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապը-Աղի Հասսէսի քիւ 38



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ սաղաթակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՁ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին

մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՀԱՐԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

ԲՆԲՍ

- (1. Մեծ փողոց, Պոն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին .
- (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

Ն.Ս.Լ.Ս.Թ.Ա

- (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը.
- (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ

- (1. Սուլթան համամ .
- (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 .

ՍԿԻՐՏԱՐ

- (2արդը Պոյու, թիւ 120 .

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօղլուի տունը:

ՖԷՆԻՔՍ ՕԹԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍ.Լ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆՆԱ

ԿԵՆՆՔԻ ՃԻԻՊ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրանգ



ՀԻՊԵՋԻ ՃԻԻՊ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ժրանգ

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ կարասիք:
ՓԵՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնը մադդկային կանքի վրայ:

ՖԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չողհնաւի՝ եւ առադատանաւի վրայ:

Ընկերութեան զրամատունն է ՔՐԷՏԻ ԼԻՕՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, թիւ 11—16:

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր ներկայացուցիչ

Գ. ՖԷՐԱՏԵԱՆ




ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/ն 22

ՀԻՆԳՇԱԲԹԻ

26 Մայիս 1905



ՎՍԵՄ. ՊԱՏՐԻԿ ԷՖԷՆՏԻ ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ


ԱՏՆՆԱՊԵՏ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԱԶԳ. ՀԻԱՆԴԱՆՈՅԻ

ԱՆԿԵՂԾ ՅԱՐԳԱՆՔ ՄԸ

Ե Ի

ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԱՅՍՕՐՈՒԱՆ ՎԻՃԱԿԸ




Ս. Փրկչեան Հիւանդանոցի հաստատութեան 73րդ տարեգարձը ու հանդիսաւորութիւնով կը տօնուի այսօր Եւթի-գուէի իր հոյակապ շէնքերուն մէջ, մասնաւոր այժմէութեան մը առարկայ կը հանդիսացնէ զայն եւ կը մզէ մեզ կարգ մը խորհրդածութիւններու շարժանքով անոր համար իր կը հաւմարինք հրապարակել, մասնաւոր այս էջերուն մէջ, ուր չենք վարանած քննադատել այդ մեծ հաստատութիւնը իր բարոյական եւ նիւթական շատ մը զեղծումներուն համար, սրանք, անցեալին մէջ, բաւական ազմուկ հանեցին իրենց չափը, աննպաստ ապրտարութեան մը տակ թողլով զայն նպաստաւորող հանրութիւնը :

Իրաւ է թէ Հիւանդանոցին պէս բազմաճիւղ հաստատութիւն մը անթերի կատարելութիւններով օժտուած չէր կրնար ըլլալ, իրաւ է թէ այլազան ու բազմերանգ տարրեր պարունակող հաստատութեան մը մէջ անկարելի էր զեղծումներուն ծուծը մարել, եւ սակայն պէտք է խոստովանիլ թէ, եթէ հիմակուան դերագոյն չընհայեցութիւնն ու անձնուէր աչալընթութիւնը առաջ ալ իրենց տեղը տնկեալին այդ հաստատութեան մէջ, գուցէ այնքան տեղի չի տրուեր զեղծումներու, գուցէ այնքան վարկաբեկ չըլլար հաստատութիւնը եւ հանրութիւնը որ ամէն ատեն, ամէն պարագաներու մէջ չի մոռնար իր լուսն տալու Հիւանդանոցին, այնքան թոյլ հաւատք մը չունենար գուցէ անոր մատակարարութեան եւ վիճակին մասին :

Տարակոյս չկայ թէ, ասով ըսել չենք ուզեր որ անոնք որ այդ հաստատութեան պաշտպան կանոնած էին եւ են, անցեալին մէջ երեսի վրայ ձգած էին զայն եւ անձնուէր հոգածութիւնով մը չէին վերաբերուեր այդ հաստատութեան հետ : Ասիկա ըսել, ճշմարտութեան դէմ բացայայտ մեղանշում մը պիտի ըլլար, եւ միւսին հանդէպ ապերախութիւն, հանդէպ անոնց սրանք գրեթէ տասը տարիէ ի վեր, իրենց բազմազրազ դարձերուն մէջ, սիրայօժար յանձն առած էին, Ազգին այդ կարեւոր հաստատութեան հոգերը իրենց վրայ առնել, օրեր, ժամեր նուիրել այդ հաստատութեան բարեկարգութեան համար, պաշտպան կանգնիլ անոր հասցիներուն, եւ վերջապէս մատակարարել այդ հաստատութիւնը որ իբր պատասխարեալ ունէր իր մէջ մինչեւ հազար հոգի, ինչպէս վերջերս, հիւանդն ալ, առաջն ալ, ծերն ալ, մանուկն ալ, տալու ալ, ջղագարն ալ, սրբն ալ որբուն հին ալ, եւ որ այսպէսով մշակութեան խիստ դժուարին դաշտ մը դարձած էր հակառակ բարեբեր հողերու վրայ ծնած ըլլալուն :

Հապա ուրեմն ինչո՞ւ այդ զեղծումները անցեալին, եւ ինչո՞ւ այն քննադա-



ԱԶՆ. ՏԻԳՐԱՆ ԷԾԷՆՏԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԱՆԿԱՄ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

առվիւնները որոնք մէկ օրէն միւսը կ'երեւային Հայ լրագրութեան մէջ : Փանի որ հոգածութիւն կար , քանի որ խնամք կար , քանի որ հասցիները գրեթէ նոյնն էին , և մանաւանդ քանի որ նոյնն էին անոնք ալ որոնք պաշտպան կանոնաւոր էին հաստատութեան , պէտք չէ՞ր որ այդ զեղծումները գոյութիւն չունենային , և ոչ ոք կարենար բան մը ըսել : Ինչո՞ւ Հիւանդ անոցը իր պատմութեան մէջ այս էջերը արձանագրեր , մանաւանդ անոնց օրով , որոնք իբր գերազանցապէս պատուաւոր և ազնիւ մարդ , մեծ յարգ կը վայելէին որքան մեր համայնքին նոյնքան և օտար շրջանակներու մէջ , և որոնց անունն արդէն գրաւական մ'էր իրենց ունեցած բարոյական և նիւթական մեծ ազդեցութեան :

Այս ինչոններուն պատճառը եթէ Հոգաբարձութիւնը կազմող անդամներուն բարութեան և ծայրայեղ ազնուութեան մէջ փնտռենք , զուցէ սխալած չենք ըլլար , որովհետեւ խղճի դէմ պիտի ըլլայ ըսել թէ անոնք անկարող մարդիկ էին , և իրենց ստանձնած գործին գիտակցութիւնը չունէին : Իրենք այնքան բարի էին , որ կարծեցին թէ ամէն անոնք ալ որոնց , անցեալին մէջ յանձնեցին հիւանդանոցին ներքին հսկողութիւնն ու մատակարարութիւնը , իրենց չափ բարի պիտի գտնուէին հաստատութեան և իրենց չափ հոգածու պիտի ըլլային անոր մէջ պատասպարւողներուն հանդէպ , և իրենց այս գիտակցութեանը մէջ նուազ աչալուրջ ընթացք մը բռնեցին , այնպէս որ Տնօրէնն ալ սկսաւ զեղ-

ծանել, բռնիքն ալ, գաղափարն ալ սկսաւ ծառ ճամբայէ մը ընթանալ, և մարտականքն մէկ քանին խակ չը վարանեցաւ իրենց փէշերուն տակ Հիւանդանոցին ճերմակիզէնները պարփակել զուրոր տոտր անոր ծախերու համար:

Աւելցնուցանելով մենք, զեղծութիւնն հետ քննադատութիւններն ալ շատցան և Հոգարարութիւնը որ իր կեանքն ամբողջ պատրաստ էր նուիրելու այդ հաստատութեան շահուն և զարգացման համար, տխուր իրականութիւններու առջև դառաւ ինքզինք և զգաց թէ զոհուած է անխիղճներու շահատակութիւններուն: Յաւը մեծ եղաւ իրեն համար, ուսկիցս խաբուած զգաց ինքզինք, մանաւանդ այնպիսիներու կողմէ որոնք զառնուկի մարթով եկած և իրենց զայլի բերաններուն կեր փնտռած էին:

Բարեբաղդաբար կազմակերպութիւնը կազմակերպութիւն էր, և Հոգարար-
 ճութիւնը անանկ ուղղութիւն մը տուած էր որ Հիւանդանոցը գրեթէ ոչինչ կոր-
 սնուցաւ իր կազմակերպութենէն և ամէն գործ իր ընթացքը կանոնաւորապէս կը
 բոլորէր նորէն այդ հաստատութեան մէջ: Հիւանդները ո՛չ մէկ ատեն առանց
 անոնցի մնացին, և պատասխանները ո՛չ մէկ բան պակաս ունեցան նորէն, ո-
 րովհետեւ Հոգարարութիւնը իրեն նպատակ ունէր իր անունին տակ գտնուող
 հաստատութիւն մը ուրիշ բոլոր ժամանակներէ աւելի կանոնաւոր պահել, մա-
 նաւանդ որ հանրութիւնն արդէն կ'աճեցնէր, կը բազմապատկէր իր նուիրատու-
 ութիւնները, ոչ թէ միայն Հիւանդանոցին պատասխանները հոգալու պարտա-
 կանութենէն թելադրուած, այլ նաեւ սա վստահ համոզումը ունենալուն համար
 թէ Հիւանդանոցի աշուի Հոգարարութիւնը գերազանցապէս վստահելի մարմին
 մըն է և անոր անձնութեան իբր վարձ, անհրաժեշտ է աշակցել միշտ որքան
 բարոյապէս նոյնքան և աւելի նիւթապէս:

Եւ այն օրէն ի վեր, երբ Հոգարարութիւնը զգաց թէ խաղեր կը դառնան
 Հիւանդանոցին մէջ, և շարաշար գործածուած է իրենց վստահութիւնն ու ազ-
 նուութիւնը, նոր կորով մը զգեցաւ կարծես, և ծայրայեղ աչալրջութիւնով մը,
 որուն օրինակը քիչ անգամ տեսնուած է դուրսէ մեր վարչական շրջանակներու
 գործառնութեանց մէջ, սկսաւ մէկիկ մէկիկ քակել թիւերը զեղծութիւններուն և
 խիստ հակալիկի մը աակ առնել ամէն ինչ որ Հիւանդանոցի անուան կը վերա-
 բերէր թէ՛ հաստատութեան մէջ և թէ՛ դուրսը:

Իր գլխաւոր գործը եղաւ զեղծանոյնները գտնել և անոնց հիմը քանդել:
 Այսպէս, մեծէն սկսեալ մինչեւ ստորագաս պաշտօններները իրենց քոթին ժող-
 վեցին Հիւանդանոցէն, և անոնք ալ որոնք կ'սկսած կը հրաւիրէին իրենց վրայ
 խիստ քննութեան մը տակ առնուեցան յանկարծակիի գալով, և լրագրութիւնը
 որ գրեթէ երկու տարի առաջ արձագանգը կ'ըլլար այդ զեղծութիւններուն, ուրա-
 խութեամբ արձանագրեց իր էջերուն մէջ անոնց արմատախիւլ ըլլալը Հոգարար-
 ճութեան ջանքերուն ջնսրհիւ և այն բարեկարգ վիճակը որ կ'զգեսուր հետզհե-
 տէ ազգային այդ մեծ հաստատութիւնը:

Աւայսօր եթէ ըսենք թէ Հիւանդանոցը առաւել քան երբեք կազմակերպ-
 ւած վիճակ մը ունի և Հոգարարութեան ջանքերը ու խնամքները բացայայտ
 կ'երեւան հաստատութեան դուռնէն մինչեւ հաստատութեան պարտէզը,
 ճշմարտութեան դէմ խօսած չենք ըլլար:



ԱԶՆ. ԳՐԻԳՈՐ ԷՅ. ԷՎՐԻՆԵԱՆ

ԱՐԵՎ. ՏՕՔ. ԱՔԱՂԱՄ ՊԷՅ
ՆԱԶԱՐԵԱՆ

ሀ. ኄ ሳ ሀ. ሆ ቆ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ


Եւ արդ արեւ ամէն մարդ երբ այսօր այցելէ Հիւանդանոցի բոլոր յարկերը իր աչքովը պիտի տեսնէ թէ Հոգաբարձութիւնը ո՞րքան անձնուիրութեամբ ըստանձնած է իր գործը և ո՞րքան ջանքեր եղած են կտատելու զորձերու և զայն օտար հիւանդանոցներուն հաւասար ամէ՛ն առաւելութիւններով օժտելու համար։ Ամէն այցելու երախտագիրութեամբ պիտի համակրին Հոգաբարձութեան անդամներուն հանդէպ, և այս վերջիններուն սիրտն ալ անշուշտ անշուր հրճուանք մը պիտի վայելէ հանրային համակրութեան և յարգանքի առարկայ դարձած տեսնելով դիրնք։

Ուր էր թէ այս հանրային համակրութիւնն ու յարգանքը, միայն իրենց պատրաստակամ անձնութեան գրգիռ մը ըլլալին իրենց, երբեք չբաժնուելու այդ հաստատութեան խնամատարութենէն, որովհետեւ հազուադէպ երեւոյթ մըն է ածսնել մեր վարչական մարմիններուն մէջ, իրենց նման անձեր որոնք միայնուցած ըլլան իրենց ազնուական ոգիին, նոյնքան ալ զօրնական եւ անաչառ ոգի մը:

Ու հիմա երբ Հիւանդանոցին երբեմնի վիճակէն ոչ մէկ նշոյլ կը տեսնենք հոն և բազմը կուեննանք իր այսօրուան բարեկարգ վիճակին արձագանգը ըլլալու, մենք ալ մեր համակրութեան ու յարգանքի բաժինը կը ռերենք մէջ՝ անզոյն առջեւ, ու, և իրր յիշատակ իրենց գործունէութեան, Հանրագիտակի էջերը կը զարդարենք լուսանկարներովը անոնց որոնք ջանացին պահել իրենց վրայ գրուած յայտերը և որոնց դէմքերն արդէն շատ բաներ կը խօսին իրենց արժանիքներուն համար ։

ԿԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ

ՎԱՀԱՆ ԹՕՇԻԿԵԱՆ



ԽԱՐՏԵԱԶ

Արեւէն խորձ մը ճաճանջ
Ինկած է ճակիոյ վրայ,
Ոսկեծիր պասկը՝ անուրջներուդ ծաղիկին,
Անուրջներուդ կիսական
Ուր զիս ալ վարեցիր քու կնոջական վայրի
բնագոյով:

Այդ վարսերուդ քաղանցկութեան
Այլերս չեն յոգնիր բնաւ .
Իրենց կոհակին ծփանցներուն մէջ
Հեքեաքային առիծի մը բաշերուն
Նմանութիւնը կ'զգամ,
Եւ ասիկա՝ անհանդարտ հրաքորքոք իղձերուս
Եղբայրացած՝
Նոր շրթայ մը կը նետէ իմ տարփաստեց սիր-
տիս վրայ:

Խարստաշ մազերուդ գաղտնիքները, խորհուրդը
Իւրացնելու, քորելու իմ սաժանիս
Խօշաբար կը նետուիմ,
Եւ շրթունքս բաղած այդ կախարհի ցանցին մէջ
Կը ծծեմ, կը ծծեմ,
Մինչեւ որ աչքս քրջի, մինչեւ որ շունչս հասնի:
Շրթունքներս կը պրկուին տեղիին տակ
Սիրսս ցաւէն կը տոցորի . . .
Ճակասագրիս դէմ կը մախտիմ
Թէ ինչո՞ւ հոգիս այնչափ խոր չէ եղած
Զիդերս ա՛յնքան հիւանդանորք . . . :

Այս անպայեւն ետք դուն դարձեալ
Փախսական առիծի պէս բաշդ կ'օրօրես,
Եւ այլերդ,
— Երկինքէն քափած զոյգ մը ծաղիկներ՝ —
Դիտակցութեան ժպիտները կը յօրինեն:

Այդ պատկերի իրաւ է քե կը տառապիմ,
Բայց տառապանքը՝ Կեանքը չէ՞ արդէն:
Կուգեմ որ միշտ դեմս ըլլամ
Որովհետեւ,
Բարկ գինիի բաժակներու գոյնին պէս
Ճակիոյ խարստաշ կոհակներէն
Այլերս յար կը մշուշուիմ:
Եւ երբ զանոնք շրթունքներուս փակցնեմ,
Կզգամ քե
Գլուխս զարկած է արդէն,
Գլուխս կը դառնայ արդէն:

Թո՛ղ տու որ այս՝ աչքս շարունակուի,
Բուռայք վարսերդ աւելի կեանքոս եմ՝
Բան արեւին ճաճանջները,
Աւելի տարփոս՝ քան գիշերուան խորհուրդները
Աւելի՛ արքշոյն՝ քան գինիի բաժակները:

ՅԱԿՈԲ ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

ՎԱՐՍԱՆՈՐԵՍ

Ժամանակը՝ ալ կը սահի հուլօրէն,
Պէտք է վնուել նգնածամբ ահաւոր .
Ու սրափիլ պատրանքներու օրօրէն՝
Ուրմէ սիրքս ըրիմ երբեմն վիրաւոր:

Բայց լրջօրէն պէտք է խորհիլ մի բոպէ .
Ընտել ուզեն՝ զայն բարութեան օրօրան՝
Ուր ինքնամփոփ մարդը վստահ կը կապէ
Սիրուն դափնին իր ջանքերուն՝ Ռահվիրան:

Կուլան արեւն՝ ապագային անվստահ,
Այդ պահուն երբ ալ վնուապէս կ'որոշուի
Երկուքէն մին՝ կամ կեանքը միւս վեհ անմահ,
Կամ աշխարհը տուայտանքի ու ցաւի:

Բայց է՞ միթէ այդ կեանքն մեզի՝ անծանօթ,
Հուսկ օրեւանն հոգիներու յուսաբեկ:
Ահա հարցը խնդիրը՝ բարդ ու կենդան,
Տարակոյս մը՝ որ կ'ընկերէ հոգին հե՛կ:

Ս. ԽԱՅԴՈՒՆԻ



ԱԶՆ. ՅԱԿՈԲ ԻՅԵՆՏԻ ՀԱՄԱՄԱՆ

ՏՆՕՐԷՆ

Ս. ՓՐԿՁԵԱՆ ԱԶԳ. ՀԻԱՆԴԱՆՈՑԻ

ՍԱՐԳԻՍ ԹՈՂՈՒՆԵԱՆԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Եւ օր մը Սարգիս Թոլունեան, մէկը այն երիտասարդներէն, որոնք աշխարհ կուգան աշխարհ գալու համար եւ որոնք կը մոռնան հետերնին բերելու մէկ քանի հատ չեքեր ի տես դանձելու Գոէտի-Լիոնէէն, անգամ մըն ալ ուլրաց եւ դառնապէս լացաւ իր բողոքին վրայ, որուն անիւը կը դառնար թէ եւ բայց ինք միշտ տակն էր հակառակ իր գերմարդկային ճիգերուն :

Իժուարութիւն չպիտի քաշեմ ձեզի ներկայացնել Սարգիս Թոլունեանը, պատուութեան հերոսը, որ ժամանակակից պատմութեան մէջ մոռցուած պիտի անցնէր, եթէ իր կենսագիրը ըլլալու պատիւը չփափաքէի աւելցնել փաստայ տրակիս, զոր մեր չնաշխարհիկ գրականութեան մէջ անուանս չորջը բոլորած ըլլալս համեստութեամբ կը խոստովանիմ :

Իր դէմքը դիտելով՝ մարդ սա համար զումը կունենայ թէ մայրնութիւնը խոր քունի մէջ թաղուած ատենը ծնած ըլլալու է, որովհետեւ աշխարհ եկած ատենը բոլորովն մոռցած էր մէկտեղ բերել, մէկ քանի հազարներէ (եղանակիս մառուլը չէ) զատ, իր բաժինը նաեւ այն շնորհներէն, որոնք չընորհալի կընծային մարդը . . . նոյն իսկ երբ իր ցեղին տգեղ կիսուն կը պատկանի :

Բայց հակառակ վերը յիշուածներէն տընանկ Ղազարոս մը ըլլալուն խելքի ձիրքերուն կողմէ . . . աստիճանակից էր Եղեբոսին :

Կարծեմ այստիւր կը բաւէ գաղափար մը տալու համար Պ. Սարգիս Թոլունեանի վրայ, որ օր մը, ամբողջ պտոյտներ ըրաւ Ամերիկացի միլիառատէրին Մոսկանին հետ, խօսեցաւ, մօտէն չփուկցաւ մեծահարուստ Եան-

քիին . . . առանց կռահելու թէ՛ բաղդին անիւր, Բիրբընթ Մոռկանի ոտքերովը . . . իր ոտքը եկած էր :

Եւ Սարգիս Թռչունեան, հակառակ իր անունին և մականունին, ինչպէս ըսինք, վանդակէն փախուցած էր ոսկի թռչունը, և այսօր, կաթէն կտրուող պէպէի մը պէս ելեր կուլայ կողքայ իր գոյնի բաղդին վրայ : Բայց, անիրաւութիւն մըն է որ կընես բաղդիդ դէմ Պ. Սարգիս Թռչունեան, անիրաւութիւն մը որ այնչափ կըլլայ :

Յանցանքը ինչո՞ւ բաղդիդ ուսերուն վրայ դնել կուզես, երբ դուն, անճարակ որսորդ, չգիտցար գոցել դուռը այն վանդակին՝ ուր կը գտնուէր թռչունը :

Եթէ երբեք աշխարհի ստեղծումէն մինչեւ այսօր բաց ձգուած ըլլային դուռները՝ լոյրը վանդակներուն, ապահովաբար, ո՛չ դուն, ո՛չ ես և ոչ ալ աշխարհը՝ թռչնասէրներուն, չպիտի գտնար ու է թռչուն մը իր տրամագրութեան տակ :

Տեսար, լսեցիր և շօշափեցիր մեծահարուստ Մօրկանը, այլոն այլ՝ ըսիր և ոջին ո՛ջ, հոս հոն գացիր հետը և հիմայ ելեր կողքաս բաղդիդ վրայ և երբեք մտքէդ չես անցըներ ողբալ . . . անճարակութեանդ վերայ, որ արժանի է մէկ քանի գլուխ Երեմիական ողբերու :

Ներէ՛, սիրելի Պ. Թռչունեան, ներէ որ այսչափ համարձակ կը խօսիմ քեզի հետ և պատճառ կըլլամ որ դուն դէմք մը չինես, ճիշդ այն մարդուն պէս, որուն կինը Դատաստանական խորհուրդին դիմելու պէտքը զգացած է՝ ամուսնութենէն շաբաթ մը վերջը :

Բայց ալ եղաւ ըլլալիքը և Ամերիկացին մեկնեցաւ, մտածելով այն կարգ մը մարդոց խելքին վրայ, որոնք հակառակ իրենց սոսկալի ծարաւութեան, չեն տեսներ իրենց քովը գտնուող յորդահոս աղբիւրը :

Ո՛վ մեծ դ թռչունեան, ո՛վ անմխիթար Սարգիսդ դու, մխիթարուէ՛, և ա՛լ հերիք լաս ու ողբաս : Աս աշխարհէն մեկնողները ալ ետ չեն դառնար, ինչպէս գիտես, ինչպէս ետ չեն դառնար այն պարկեշտասուն կիները, որոնց հարիւ կը նետեն : Այո՛, ետ կը դառնան, բայց միայն անոնք՝ որոնք allée և retour տոմսակ առած են Սիրքէճիէն :

Աստուած մեծ է, սիրելի Թռչունեան, և իր ողորմութիւնը անչափ Յոյսդ մի՛ կըտրեր և քիչ մը փիլիսոփայ եղիր : Խորհէ՛ որ դուն միակը չես աս աշխարհի մէջ, որոնք երջանկութեան սեմին վրայ կը կոխեն, բայց դուռը զարնելու ատեն կը տեսնան թէ դժբախտ զանգակը վերցուած է վրայէն :

Ասանկ բաներ մեզի պէս մահկանացուներու համար է, եթէ չես հաւատար հարցուր Թօլայեանին, որ քեզի բաւական երկար քարոզ մը պիտի կարդայ « Բերացի » ստորագրութիւնով :


Այսպէս սիրելի Պ. Սարգիս, յիշէ նաեւ ֆռանսական այն առածը, որ կրնայ բալասան մը ըլլալ քսակիդ վրայ բացուած վէրքին : Դրամական գործի մէջ կորսնցնողը, սիրոյ աշխարհին մէջ աւելի հաճելի, աւելի սիրուն և աւելի արդիւնաբեր բան մը կը գտնայ՝ կըսեն : Ասիկայ սուտ է թէ ճշմարիտ, խաչ որ կանգիտանամ :

Սա անուրանալի է թէ քերականութեան քաղուածքը շատ հաճելի զբաղում մընէ ուսումնաստենջ երիտասարդի մը համար, մանաւանդ երբ աղւորիկի մը համախոհութեամբ կը կատարուի անիկա :


Ո՛հ, գլուխդ ուռեցաւ կարծեմ և խըրատներս (որ ըստ Բանագող Լուռթիւնեանի) կրնայ շատ հաճելի չը թուիլ քեզի : Դէմքդ կը ծռուկես, աչքերդ խոշոր մը կը բանաս, ձեռքդ վեր կը վերցնես և, ո՛հ, Երեսիս ապտակ մընալ զարնելու անհուն փափաք մը ունիս, փափաք մը, որուն իրագործումը չեմ գիտեր թէ քանի ապտակի պիտի նստի ինծի :

Ուրեմն երթաք բարով սիրելի Թռչունեան, երթաք բարով և Աստուած մի՛ արասցէ եթէ երբեք օր մընալ Մոռկանի հանդիպելու բաղդը ունենաք, իմ կողմէս բարեկընէք և կըսէք իրեն թէ . . . մարդիկ կան որոնք ծարաւ են և չեն խմեր, անօթի են և չեն ուտեր, հիւանդ են և դեղ չեն ուզեր առնել :

F. ԼՈՒԻՅԵՐԵԱՆ



Վ Ի Ճ Ա Կ



Մինչ այսօր իբր հնաւանդ սովորութիւն, հոս հոն, տուներու պարտէզներու մէջ, երիտասարդ մանչ և աղջիկ, մամիկներու մամուկ մատներով պատրաստած կիւփեմին բոլորտիքը խլացուցիչ պոռակահաւով մը իրենց վիճակը կը քաշեն, ջուրին մէջ ձգուած մէն մի առարկային թուցիկ ոտանաւորներ արտասանելով, մենք հոս շեղում մը կընենք իբր նորոյթ, և կը փութանք օրուան դէմքերու վիճակը գրանկարել հոս, սա պարզ թուղթին վրայ, որպէս զի մեր բազմաթիւ ընթերցողներն ալ մասնակցին ու լսեն արտասանուած վիճակը:

Երբ այս սողերը կը գրեմ, ես ալ իմ խավանոցս ունիմ քովիկս, բայց ոչ մանչ աղջիկ բազմութիւն մը, ալ միս մինակ սենեկիս չորս պատերուն մէջ, գրասեղանիս առջև, ու ձեռքս ամանին մէջ տանելով կը քաշեմ առարկայ մը:

ՔԱՀԱՆԱՆ

Եկեղեցիին մէջ Աստուծոյ մարդը, անկէ դուրս մամոնայի մարդը, իսկ տանը մէջ ընտանիքի մարդն է ան:

Քահանայի աչքէն աւելի փոքր կուշտ կըլլայ, և այս պարագան իր լայն փէշերը կը պարտրկեն:

Իր ամուսնութենէն երեսուն տարի վերջն ալ իր երէցկիւնը կը սիրէ այն տաք վերաբերումով, որով խեղճ չպիտի սիրէր չաղար սակի դրամոստիտ առնող փեսայ մը:

Աղջիկ գտաւ ունենալու համար հոգի կուտայ Տէր պապան, և անպատահաւ տուն փեսայ առնել կուգէ. . . չի մոռնամ ըսելու որ իր էն առատարութիւն դրամոստիտը թեւատարած պահպանիչն է:

Տէր պապան այնքան կը սիրէ մինակը՝ իր երեցկիւնին հետ ընակել, որ եթէ քենիներ ունենայ, զատ տան վարձք կը վճարէ, որպէս զի սենեկին երկու տնկիւնը ինք և իրենք բազմին:

Բան մը գնած ժամանակ խիստ սակարկութիւն չընեն, թերեւս նոյնը իր գլուխը չի գալու համար:

Տէր պապան կուգէ որ իր երէցկիւնը պարզ հագուի, իսկ աղջիկներուն առջև իր քսակը բաց է միշտ:

Տէր պապան թէեւ առաւօտուն կանուխ, աքլորներուն հետ կարթննայ, բայց հաւերուն հետ կանուխ չի պառկիր:

Տէր պապան աւելի կը սիրէ ջուլ գողտղի մը առջեւէն մօրուք չարժել՝ քան թէ հարսնիքի խրախճանութեանց մասնակցիլ:

Տէր պապան տարին երեք անգամ կը հիւանդանայ. Զատիկին, Ծնունդին և Աստուածածնին, իր ծովիկերը խոստովանցնելու համար հոս հոն վաղելուն հետեւանքէն:

Եկեղեցիին մէջ տէր պապային էն սիրական պաշտօնեան բանկալապետը կըլլայ միշտ, բանկալապետները տէր պապաներուն երթեւեկը կը համարուին:

Տէր պապային խրատ իրակը թաղ. Խորհուրդն է, անոնցմէ չ'ախորժիր ընտ:

Աւելի նախընտրելի է տէր պապայի միտղջկան հետ ամուսնանալ տուն փեսայ, քան հարուստէ դրամոստիտ առնել, որովհետեւ. . . տէր պապային խոռոզը ամէն օր ոսկի հաւկիթ կ'ածէ:

ՎԱՐԺԱՊԵՏԸ

Վարժապետը, հակառակ իր սահմանաբակ պիւտեմին, մեղուի փեթակի մէջ նըստելու պէս տանը մէջ, տառնէն աւելի բացառիկ անհատներ կուենայ միշտ, որոնք կնիկանը յօտաւոր կամ հեռաւոր ազգականներէն կըլլան:

Երեք տարին անգամ մի ռըտէնկօթ մը կը գնէ վարժապետը և երրորդ տարին մէջի լիւսնիկը կնիկը կը կոկէ:

Կօչիկները վեց ամիսէն կը ճաթըռտին ,
այնքան կը սիրէ լուստալը պտըտիլ :

Վարժապետը բնաւ չը սիրէր մինակը պը-
տոյտի ելլալ , այլ միշտ ընտանեօք թերեւս
օձիքէն վեր թուղ քռալթալով . . . շտկելու
համար մէն մի քայլափոխի :

Դպրոցին մէջ վարժապետը միլիոնատէրի
մը պէս կերելի . . . աշակերտներուն դէմ ,
իսկ անկէ դուրս նպարավաճառը քսան
Չղորչէն աւելի քոհտի չի բանար իրեն :

Վարժապետը երբ կարգուիլ ուղէ դրա-
մօժիտ չի փնտռեր , այլ ֆասուլեա փիեւզիւն
լաւ պատրաստող մասնագիտունի մը հետ
կուղէ կապուիլ ընդհանրապէս :

Ձեռ գիտեր ինչու ամէն վարժապետ իր
քենին կը սիրէ , ահա տա պարագային է
միայն որ այր և կին շաբթու մէջ կը սրբ-
դողին , շաբթ իրինկուն հաշտուելու հա-
մար :

Հակառակ էքօնօմիսթ մը ըլլալուն , վար-
ժապետը պեռպեռիք քրոյալ կ'ըլլայ սըխը
բերտահով , որովհետեւ չաբաթը մէկ անգամ
կրնայ երկուքնոցը ցնծալ :

Վարժապետը երեսին կը ժպտի այն աշա-
կերտին , որուն հայրը երբեմն կամուրջին
դրամը և կամ շոգենաւին տոմսակը կը գնէ ,
իսկ միւսներուն հանդէպ կծու դէմք մը կը
չինէ միշտ :

Անսական առած օրը վարժապետին ա-
ռաջին ծախքը ծխալաճառ ակտէրին հաշիւը
մաքելն է . . . շատ կը ծխէ :

Վարժապետին մատները խոհարարինին
յար և նման են , երկուքինն ալ դեղին կըլ-
լան , առաջնոյնը ծխախոտէն , իսկ երկրոր-
դինը սոխէն :

Վարժապետին ուղտեկօթին պոքօնիեռնե-
րը միշտ մաշած կըլլան թաղականի , տնօ-
րէնի , հոգաբարձուի դէմ կոճկուելէն :

Վարժապետը տուն հասնելուն կեճեկի կը
հագնի , մարմնոյն հանգիստէն աւելի սե
քօսթիւմը չ'աղտոտելու համար :

Կիրակի առաւօտները ոտքը ջուրը կը
դնէ ու նստընները կը կտրէ :

Վարժապետին կինը եկեղեցի կը մտնայ
այնպէս ինչպէս կը մտնեն Տիկին Թաղական
աղաները , սա տարբերութեամբ որ վերջին-
ներուն ետեւէն մինաէր կը վազէ , իսկ ա-
ռաջիններուն . . . պարտք :

ՎԱՐժԱՊԵՏԻՆ

Ընդհանրապէս ամուրի կըլլայ վարժուհին ,
զուրկ ամուսինէ , միսէ և լնական գեղեց-
կութենէ :

Վարժուհի կըլլայ ընդհանրապէս այն ո-
րիորդը , որ իր երազին մէջ ձերմակ մօրու-
քով մէկը կըսէ իրեն . . . չպիտի ամուսնու-
նաս :

Վարժուհին , իր տանը աղան կըլլայ միշտ ,
այսինքն մասաւկարարը , մայրը խոհարարու-
թիւնը կընէ , իսկ հայրը սպասաւորութիւնը :

Իր պարզութեան մէջ միշտ շիք կերեւայ
վարժուհին , միշտ քօռսեով , տանը ուտելի-
քէն կը խնայէ , իր արդուզարդէն ոչ կրթէք :

Երբ փողոց կըլլայ վարժուհին , գետնի
քարերը համբելու պէս վար կը նայի , իսկ
սուտեթի մը մէջ ոտքը նստըր կը կապէ պա-
րկէն , այնքան կը սիրէ երեկոյթը և զրօ-
սանքը :

Վարժապետներէն չ'ախորժիր երեսք , այն-
պէս որ երբ հարկ ըլլայ ամուսնանալ , կը
նախընտրէ զլուսը ձերմակ գօլալը պօնէ մը
անցնել քան քօզք :

Վարժուհիին աչքը միշտ վերը կ'ըլլայ , և
հօգի կ'ուտայ հայ-լայք ընտանիքի զատիկ մը
ճալակողտելու համար :

Վարժուհիին միակ բաղձանքը , իր պաշ-
տօնը ծածկելն է , լաւ կը սեպէ , կար կա-
րող մօտիսթ մը ճանչցուիլ քան թէ վար-
ժուհի մը , և ահա ասոր համար ճամբան
ձեռքն ինչ որ ունենայ ուսուցիչ չ'ինէ , կեր-
պաս կամ մօտեկ կարծեցնելու համար :

Վարժուհին մօրը հետ դուրս կ'ելլայ և
կուղէ որ տասը մէթը կտեւէն քալէ ան :

Վարժուհիին էն հոգ տարած բաներն են ,
կանթերը , պօթերը և հովանոցը , և . . .
ներքնաշապիկը , որ միշտ ծանր պառօնէի
կըլլայ . . . խմայածիս նայելով :

Վարժուհին իր ամսականներէն եքմօմի
կընէ այնքան դրամ , որով կարենայ տարին
անգամ մը բաց բայքօն նստիլ , տառն ան-
գամ ծով մտնալ և ամառուան եղանակին
կառասօն գլխարկ մը գնել :

Նմանը սիրէ զնմանը , կըսեն , լոյց վար-
ժուհին բացառութիւն է , որովհետեւ չը սի-
րեր վարժապետները , այնպէս որ , եթէ որ
մը ուղէ կարգուիլ , կը նախընտրէ գործաւոր

աղեկ մը ճաշակողանէ, ամուսինէ աւելի իբր որդեգիր, քան թէ վարժապետ մը :

Վարժուհիին դրամագլուխը սիրտն է, ուրկէ առատ կը բաշխէ և սակայն . . . չի հասնիր :

ՏՈՒՆ ՓԵՍԱՆ

Երջանիկ արարած, Մայիսի վարդերուն պէս բաղդաւոր, որուն վրայ կը պաղի կը մնայ ամենուն աչքը :

Տուն փեսան, այն չիացած հոգեզաւակն է, որ իր աներ պապային թեւերուն մէջ ապաստանած, իր կեանքը կը վարէ, տանը քն սիրականը, քն մեծայարգը և քն սիրելին զատուելով :

Ամէն բան տուն փեսային համար է, տանը մէջ միսին պուտէն մինչև աներոջը . . . կուտը :

Առտուն կնոջը հետ համայնորով մը կը բաժնուի ան գործի երթալու համար, և երեկոյին ձեռքերը գրպանը ներս կը մտնայ, և եթէ հարցնես թէ միտը քանի՞ր կուտան կոր, ուսերը վեր առած, «առած չունիմ որ գիտնամ» կ'ըսէ աներես ժպիտ մը յորինելով, ուրբուն պեխերուն աջ ու ձախը :

Կիրակիները երբ տուն փեսան իր կնիւր թեւ առած պտոյտի ելլալ ուզէ, կնոջը մայրը քեօքրիւմ ալ ըլլայ, հետերնին կը գտնուի, որպէս զի տեղ մը՝ զբօսավայր մը նստած ժամանակին միտքին տակէն կախ գրպանէն հարկ եղած ծախքերը ազկանը ձեռքով վճարել տայ . . . փեսին ծանրութիւն չի տալու համար :

Տանը մէջ կիտած կերակուրները տուն փեսային ճաշակովը կը պատրաստուին, այնպէս որ առաւօտուն տունէն մեկնած ասին, գիշերուան ինչ ուտելիքը կը գիտնայ ան :

Երբ տուն փեսան, խօսքը քաղեցունելիք կամ դրամ քաշելու խնդիր մը ունենայ, մէկ երկու օր առաջ քիթը բերանը կը կախէ, կնոջը հետ սրբողածի պէս ձև մը կ'ընէ, և սեղանին վրայ բան չուտեր, մինչև որ հայրիկը մայրիկը իրենց աղջկան բերնէն իմանան խնդիրը, կէս ժամ չի տեսեր ոսկիները գրպանը կուգան :

Տուն փեսային վայելած առաւելութիւնը, բուն տանը զաւակը չի կրնար երազել :

Տուն փեսային ականջը դուրսը, հանրային կարծիքին՝ իսկ աչքը աներ պապային վրայ կըլլայ, օր առաջ անոր տեղը անցնելով տանը բոլոր տէրը ըլլալու համար :

ՕՐՈՒԱՆ ԳՐԱԳԻՐԸ

Միշտ զժգո՛ւ առած ամսականէն, Բաթո՛նին քով մազազային համալէն ալ ստոր կը ցուցնէ ինքզինքը, իսկ անկէ դուրս, կամ կիրակիները երբ հանդիպիս իրեն, հարցնելու կուգայ թէ «այս տարուան թիֆթիի գործին մէջ յաջողեցա՞ւ թէ չէ . . . » :

Տանը սիրելին է օրուան գրագիրը, մօրկանը համար որ աչքը երեսին, քայլովսի պէս կը պաշտէ զատիկը, անկէ սպասելով այն բոլոր բարիքները, զորոս կականկալէր իր ամուսինէն : Հիմա տղան տանը տխարիկն է, իսկ բուն հայրը քիսքիսկը :

Երկու ձեռք քօթիւմ ունի օրուան զրագիրը, ամառուան ձմեռուան, և բարակ բառտըսիւ մը, զոր կը հագնի բաթոնին ջատկի վիզիթայի դացած ստենը, և երբեմն կիրակիները երբ վերին ջուրերը պտոյտի երթայ :

Օրուան գրագիրին իտէալն է, աղւո՛ւ և փայլալը աղջիկ մը, և այնքան խօսք ուտի է որ, մինչև որ մայրիկը չի տեսնայ, չի հաւնի փերտէի հալիս սն մատը չ'անցընէր, իբր ալիանս . . . :

Բաթոնին դիմացը մուկ կտրող այդ աղեկին մայրը երբ ամուսնութեան համար խալովու գի մը հետ բանակցի «պաշ կազըճի է ամա, աս տարի չօրպոճին իրեն գործին օտթալս պիտի ընէ . . . » ըսելով կը համոմէ խօսքը, մինչդեռ յիտուն զրջ չ'աւելնար 300/ին վրայ :

Մէկ իտէալ մը ունի օրուան գրագիրը, նշանուի կուտաւոր օրիորդի մը հետ և կիրակիները բայ Փայթօյի մը մէջ երկնաւոր նշանածին այցելել : Հինգ զրջ բոլոր պուտան կուտայ կառապանին, երբ սա նախադրեցուցումով մը իջած աստեր ոտքի ելլայ ճիշդ այն վայրկեանին՝ երբ նշանած օրիորդը իփէքի պլուզայով պատուհանը բլլայ . . . :

Ս. ՓՐԿՁԵԱՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԸ

Արդ հոս կարժէ որ ընդարձակ տեսութիւն մը ընենք, մեր մէկհատիկ տան ներքին և արտաքին վիճակին վրայ, բայց, տեղը սուղ բլլալով կը գոհանանք առաջարկել և կտրողայ նոյն հաստատութեան 1905ի վիճակագրոյցը, որուն մէջ մեր զրեյիքներուն հաշտապատիկը կրնաք գտնել :

Հիմա ձեզ կը մնայ ձեռք երկնցնել հողէ պտուկին մէջ, նոյն իսկ ձեր անձին վիճակը քննելու համար :

Իսկ գալով իմ վիճակիս, Բիզիբակյանս տեսնողները՝ բարոյականս՝ ճանչցողները՝ իսկ ՆԻԴԻՍԿԱՆՍ . . . բաժանորդներս կրնան վկայել :

ԼԻԼԱ

ԴԵՄՔԵՐ ՊԵՐՃԱՇՈՒՔ
ԵՒ ՈՉ ՄԻՆ ՀԱՃԻ
ԽՕՍՔԵՐ ԱՆՇՇՈՒԿ
ԱՒՈՒՐ ՊԱՏՇԱՋԻ

Յե՛սի գուլէի պարիսպէն անդին ,
Հաստատուած վրտան մեծ սարաւանդին ,
Ուր հողն ընդարձակ , բարեբեր , յուռքի ,
Բաղդաթուղքերու հանգոյն ^{աճեալ} ,
Կանկառներ ծընաւ երբեմն արգանդէն
Ջուս հիմա , քրքուրք , աւաղ , կը հա՛ղեն ,
Ուր մարդն եւ ամէն տեսալ աշխատուն
Երկնից տակ կ'ապրին ջինջ եւ օգնասուն ,
Նոյն Հիւանդանոցն , ա՛նգին օթեւան ,
Ջարդարուած օրքեղ ծաղկօք հոտեւան ,
Այսօր , դափնիներ կ'զգենու փառաց ,
Եւ ամէն անոնք որ հոն ափ առած
Իբր հիւանդ , ապուշ , ջղագար , անոք
Կ'ուսեն , կը խըմեն ու կ'ապրին անհոգ ,
Ջիրենք խընամոզ հանրութեան ի տես
Խանդով մ'անգիտակ կուգան ի հանդես ,
Ու հաստատութեան յարկերուն մէջ ալ
Ուր ո՛չ դժգոհիլ կայ , ո՛չ տեսնող
Պերճախօս անձեր , աչէն կամ ձայն
Գոհունակութեան բառեր կը ծախեն ,
Եւ ի լուր ապուշ , անձայն ու լռիկ ,
Շատեր կը հրեմուլին եւ ոմանք կ'ոճոճին ,
Կ'արժէ որ իբրեւ մի ոմն Ամբակում ,
Որուն զբիշն այսօր ունի խիստ հակում
Շարեղու տղեր բազմաց ի նըպաս ,
Յս ալ իմ բերանս բանամ բարեբաս ,
Ու անջինջ կերպով , եւ ո՛չ վազանցուկ
Ճառեմ իմ քերթիս մէջ այս նեղ , անձուկ :
Եւ զի ամենուն աչքերն , ի Փրկիչ
Այսօր անպատճառ կը յառին մի բիշ
Անոնց որ Ազգին այս հոյակապ տան
Գիշեր ու ցերեկ միշտ հոգի կուտան
Եւ ջանքով մը լուռ ու անօրինակ
Հիւանդանոցին օգնեն շարունակ ,
Արժան կը դասեմ զրծեղ անօրոճեկ
Անձնուէր դեմքերն այդ մեծ , պերճաօր
Գրչոյս անորոշ , որ ի սեր յանգի ,
Չեմ գիտեր թէ ո՛ւր պիտ' երթայ , յանգի :

Նախ քան կուռ դեմքերն այլ արարածոց
Հոգաբարձութեան մրտնելով ի ծոց ,
Իբր Ասենապետ , կանգուն կայ ի սեմ ,
Կիւլպենկեան Պատրիկ Էֆէնտին վրտն ,
Որուն աչքերն սրտես ու ջինջ
Ձի խուսափիւր բնաւ գեղծում մ'իսկ ոչինչ ,
Եւ որուն նակասն անխորժում , արդէն
Շոտ ինչ լաւագոյն խօսի այս մարդէն :
Պատկերն որ այսօր ի Հաճախորդ
Հոգ չէ թէ թողով զմեզ պարտի տակ ,
Առաջին եջին մէջ լայնապատում
Պատկարեղոյ ի խիճնգ անպատում ,
Բազմած է իրեն տեղէն անգիտակ ,
Իր բարի գործոց իբրեւ յիշատակ ,
Ակնարկով մ'անտուշ ցոյց տալ տուաջին
Թէ անձն այս՝ մարմին մ'ունի գեր , միջին
Ու գլխուն մէջ իր . հոյակապ , ուշեղ
Ձի կան մտածումնք բնաւ կոր ու շեղ ,
Թէ երբ բարկութիւն մ'ունենայ սաստիկ ,
Կրակ կը կրքի , ո՛հ , չարաբաստիկ ,
Ու հաստատութեան պ'ուշտեմայ . . . չնչին
Ինչպէս եւ մեծերն իրմէ կ'երկնչին :
Փոքորիկէն վերջ , պայծառ կլիմայ ,
Իբր Ասենապետ երկրորդ ալ , հիմա ,
Քան զիւր ընկերներ , առաւել ժպտուն
Ջուր Տիեզերքիս մեծ Պարգեւատուն ,
Իբրեւ անբաճիւր ընծայ մեր այս տան
— Խեղճ հիւանդներու ցաւո՛ւն բուրասս սն —
Շնորհած է անգիւն ողորմութեամբ իր ,
— Այսպէս խօսելու , ո՛հ , չեմ վառանդիր — ,
Կուգայ հասակովն իր ^{Տէրաւոր} ,
Հեռուէն կարծես քառասունամեկ ,
Մանուկեան Տիգրան Էֆէնտին պարտեւ
Ու հաստատութեան իբրեւ ամուր քեւ ,
Անոր շահերուն՝ պ'ուշտեմ եւ կամ տեր ,
Իր ջանքն ու խընամք երբե՛ք չ'ընդհատեր ,
Եւ պատկարեալ ամբողջ համակիր
Յարգանք կը տաճեն անձին համակ իր :

Հոգաբարձութեան երբեմն օժանդակ
 եւ այժմ հոգիով, մարմնով բովանդակ
 իբր անդամ հարպիկ, հարսար, խելացի
 Ասեան կուգայ, ո՛հ, միշտ Կեսարացի,
 Ասլանեան Վրսեմ. էֆենտին Արթին
 Որուն սրբին մէջ ջանքեր կը յորդին,
 եւ հաստատութիւնն իրեն կը պարտի
 Ջրօն գործիքներն ամբողջ . . . նորաշի:
 եւ քանզի, ի մեծ վիշտ եւ կամ ի ցաւ
 Խմբագրութիւնս իր պատկերն չունեցաւ,
 Պարս կը սեպեմ ինձ, գրծել հոս յանգով
 Նըկարն իր սիրուն, գրչիս հոսանքով,
 Խրնդրելով կանխաւ որ ներել հաճի
 Դրչի խաղերուս իմ չարանքնի:
 — Երբ տեսնեմ այսօր որ տոսիկ, տոսիկ
 Շուռանի մը պէս, անձ մը համեստիկ,
 Դուռիչ աչերով, այսով շառագոյն
 Բացուած ու տեսնոս, նուռերու հանգոյն,
 Առանց աչ ու ձախ նայելու, յաւէս,
 Կը քալէ շիւղիկ, երբե՛ք վէս ի վէս,
 Մօտեցիք իրեն, բընաւ մ'երկմքիք,
 Ինքն է անպատեհ, կըլոր կամ կունտիկ,
 Որ գըլուխը կախ կ'անցնի ձեր բովէն
 Մինչ մարդիկ հեռուանց զինքը կը գովեն:

Փամացոյցի պէս ուղիղ եւ քնիւր,
 Ամեն նիւտերուն եկող անխըսիւր,
 Էվրենեան Դրիգոր էֆենտին խոհուն,
 Դեմով խիստ բարի, սրտով զգայուն
 Չորս զին պատկառաւ սրբութիւն կուգայ —
 — Թերթիս մէջ դըրուած պատկերն իր՝ վրկայ —
 Որ իր ստանձնած պատշոնին մէջ յար
 Ցուց սղրէ, ոգին իր մեծ, անաչառ,
 եւ չուզեր բընաւ, ըղձամբ մը տոկուն
 Որ գըրկանք մ'ըլլայ հոն եւ ոչ մէկուն:

Մումայր մօրուօք, հասակով պարբեւ,
 Այդ հաստատութեան համար կապար քեւ

Կ'երեւայ յետոյ, գլխովն օրօրուն
 Ալեանաք Դրիգոր էֆենտին ներհուն,
 Որ քեւ վերջերս քառուած Մաքրի-գեղ,
 Կեանք մը կ'անցընէ աննըման, շրթեղ,
 — Խորհելով անուշտ մըսինքն մեջէն իր
 Թէ աշխարհս է խիստ, ընդարձակ, նանիւր
 եւ բազմապատար մի չըմնաղ պանդուկ
 Ուր մարդ հաւսակի՛լ պէտք է լիաթոք —
 Բայց յանկարծ, — — — էլ, ք — էլ առանձին
 Կը մըսնէ զոնքն Հիւանդանոցին,
 Մինչ մեջիններն ալ հանդէպ իր տեսին,
 Վախիւալով կարծես, հոս, հոն, սողոսկին,
 Ջի եկողն յաւէս, տապաւ տանուէր
 Կեանքին մէջ երբեք չէ մը չուտեր:

Ք ոն զիւր ընկերներ նըւազ գացող անդ,
 Բայց փայտեցուցած յանախ իր տաղանդ,
 Անոնց մէջ կայ դեռ, բարեկարգ ու շէ՛տ,
 Տօքթօր Նազարեան պէյն որ անուշիկ
 Իրեն բընոյթով, կենցաղով փափուկ,
 Ընթաց մը ունի կարծես խուսափուկ,
 Բայց, — ինչպէս կ'ըսէր անցեալ օր անտուտ,
 Խիւսափեցեան Մեծ էֆենտին Մագսուտ,
 Դրաւտենեակի Տեսուչն հոյակապ,
 Այդ հաստատութեան մակբայն ու շաղկապ, —
 Երբ հոգաբարձուք ընեն աղաչանք,
 Կ'ընծայէ անոր՝ խորհուրդներն ու ջանք:

Ու հիմա որ հոս պատկերացուցինք
 Այս չըմնաղ ու մեծ, պերճաւոր անձինք,
 Որք սիրոյթաւ դուռսէն կ'աշխատեն
 Այդ հաստատութեան զարգացման դասին,
 Կ'արժէ որ յիշենք հոսեղ անխափան,
 Իբրեւ ճեմարիտ, անկեղծ վերջաբան
 Իր պատկառելի հասակովն ուժեղ,
 Հայկազն Իսրայէլ, անոր բով՝ . . . մըծեղ
 Համամեան Յակոբ էֆենտին բարի
 Որ իր պատշոնին սերիւ կը փարի
 եւ իբր աշխուրջ, հարսար Տընօրէն
 Յոյց զըւաւ արժէքն առաջին օրէն:



Տ. Խմբագիր,

Յայտնի բան է թէ՛ բնութիւնը կը ծնի բանաստեղծը, ու բանաստեղծը կերպէ բնութիւնը, ու հետեւաբար ամէն գարնան բնութեան զարթոնումին հետ կը զարթնուի նաև բանաստեղծը, որմէ յառաջ կուգայ ամէն տարի Մայիսին բանաստեղծական սեզոնը: Արդ (անձնագրովութիւն չըլլայ) ես որ ի ծնէ բանաստեղծ եմ, ինչ որ իմ անտիպ (կը խնդրուի այս բառին իմաստը չշփոթել) գործերէս կը հասկցուի, ընդ գրոյս կը շրկեմ Ձեզ յետագայ Մայիսեան բանաստեղծութիւնը, որպէս զի հաճիք հրատարակել զայն, ներողամիտ լինելով անոր ու չանալուն, քանի որ կամքէս անկախ պատճառով մըն էր այն, վրասն զի նախ այս տարի ձմեռը խիստ բարձրուն՝ բնութիւնը ուշ արթնցաւ, հետեւա-

բար և ուշ արթնցան բանաստեղծութիւնն ու «սախըղ խապախ»ին:


Երկրորդ՝ նորեկուկ զրականութեան հետեւած ըլլալու համար գաղղիկէն առկուլու զբաղած էի, քանի որ հիմա բանաստեղծութեանց մէկ քառորդ մասը գաղղիկէն կը գրուի, իբր թէ մնացեալ հայերէնէն բան մը հասկըցած ըլլայինք ու գործը մնար գաղղիկէնին հաճեցէք Տէր Խմբագիր, ի փոխարէն մեր այս բանաստեղծութեան՝ ուղարկել մեզ այն գումարը, որուն չափազանց պէտք ունինք, և դուք բնաւ չէք խոստացած նոյն իսկ «մէթալիք» մը: Ղրկելու մասին դիւրութիւն մը ըլլալու համար փոսթայի փուլ ալ կառնենք:

Հնդունեցէք ահադին յարգանքներս
ՍԱՂԱԹԻԷԼ

Ս Ա Ս Ա Յ Ր Ս

Տարույն ամէն ամիսներէն ես (joli)
Դարարագարդ բնութեան կը շրջայ մարդ մոյի:
Ամէն պարսէզ դաշտեր բոյր շնուն (homme)
Երիտասարդի աղքատիք գերք մեղրամոլ:
Երգեն պարեն ու զբօսնուն (comme il faut)
Կը քրքրենիկ պաղիկ կը շրջան ջերմ քիճո:
Ամէն տեղ խիկոյ ուրախութիւն (toujours chant)
Բոյր ծաղիկ յամիկ մեխակ փարդ շուշան:
Կը փայտեն բնութիւնը (sans argent)
Բանի որ այս (sans argent) և է անբաժան:
Դեղեցիկ սեռն կը պրքրի (négligé)
Տեսնողները կարծես խայրում են իժէ:
Մասաղ մանկունի գոսրեղով (sur la terre)
Կաղսոսեն ու կը պարտեն ինր շարքեր:
Այն անբաժան երանելի (eau de vie) և
Որ գիկեպակ եօթնէն պակաս չը տոյն:
Պարպուկաւ սպառնալ (en gros)
Աստուծոյ էր որ չը տեսաւ զայն Հորոյ:
Ինչ բանկազին առողջութիւն ու (jeunesse)
Ձի ուր պար կայ խիկոյ կերուխում միշտ հոն ես:
Երբ տեսնես քէ երկինք պայծառ է (toujours)
Ձե՛ս ուզեր որ դաշտերուն մէջ գաս դու ծուռ:
Միկ իրիկուն զբօսանքով (fatigué)
Ոհ Մայիսը ամառ մէջ մէկ հասիկ է:
Այս ամէնը քեզ կը պարսիկ քեզ ո՛վ (mai)
Շա՛ս կաղաչենք մի փախիր դու շուշ մեզմէ:
Բանաստեղծին հետ երբ ընկեր է մուսան
Դըրուխ յառնէր ուտելով միշտ փրոստան:

PAR ՍԱՂԱԹԻԷԼ



ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԸ

ՔՆԵՐԿԱԹՈՒՂԻԻ ԳԾԻՆ ԿՈՂՄԷՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՈՒԱԾ

ԲՈՒՍԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Մայիսի մէջ ենք և կանաչադեղ բնու-
թիւնը առիթ կուտայ որ քիչ մը իր վրայ
խորհինք : Առաջին երկու օրերու ստեղծա-
գործումէն վերջ , երրորդ օրը ըսաւ Աստ-
ուած . « Բղխեսցէ երկիր զբանջար խոտոյ ,
սերմանել սերմն ըստ ազգի և ըստ նմանու-
թեան » : Աստուածային այս հրամանէն ա-
ռաջ արդարեւ շատ ախար էր թերեւս երկի-
րը , հողի , ջրի և ժայռերու ահագին զան-
գուած մը կը ներկայացնէր այն , ո՛չ մի ծիլ,
ոչ մէկ ծաղիկ , թուփ կամ մացառ չէր տա-
տանեցնէր իր քնքուշ գլուխը . անտառի ոչ
մէկ սօսափուն ճանչցած էր այսօրուան մե-
ծավայելուչ բնութիւնը . կենդանիները ար-
դէն իսկ չէին կրնար ըլլալ իրենց կարգի
քնական յաջորդութեամբ , թերեւս եղանակ-
ներու յարմար հովեր միայն իրենց սուղ-
մունքը լսելի կընէին այն երկար օրերուն

մէջ , լեռներուն ու ծովերուն ամայութեանց
վրայ և կայույտ ջրի ծածանուտ ծիւնքնե-
րը արեւելքէն արեւմուտք , հիւսիսէն հարաւ
կ'ընթանային խռովայոյզ : Յանկարծ Արար-
չին հրամայող շունչը սահեցաւ հեռաւոր ու
մօտաւոր վայրերուն վրայ , մեծ ու յզտիկ
կանաչադեղ կեանքերը դուրս ելան ամե-
նուտ , այն օրէն ծլեցան երկրի երեսին վը-
րայ ցամքած ջուրերէն արգասաւորուած խո-
տերը , ծաղիկները , թուփեր և մացառներ
և անտառի հսկայաբերձ ծառեր , համատա-
րած կուղծերը , որ ընդհանուր դարերու մէջէն
կուգան դարձեալ զարդարել Մայիսի դաշ-
տերն ու հովիտները . թուխ անտառները զո-
վացիկ ստուերներ ձգել աղբիւրներուն ու
ծաղկազարդ վտակներուն եզերքները , ուր
մանրչալիները ապաստան կը գտնեն , մէկ
խօսքով՝ կեանքը կաղմուեցաւ , գոյութիւնը


չարժեցաւ, մանկան մը պէս սիրուն երկիրը
 ժպտեցաւ արարչութեան մը դէմ ու կեն-
 դանութեան չունչ մը բուրեց ամէն կողմ :
 Այսպէս եղաւ երջանիկ երրորդ օրուայ մէջ
 երկրին համայնապատկերը, չոր բուսական
 կեանքին հետ գեղեցկութեան նոր կեանք
 մը առաւ, որուն կապուկցում ապագայ
 մարդուն սիրտն ու միտքը, ոչ միայն անոր
 մէ իր գոյութեան բաժինը ընդունելու հա-
 մար, այլ և իր մտքի թռչններուն յագուրդ
 յափշտակելու : Ասով քնքուշ վարդ մը նոյն-
 չափ սիրելի եղաւ մարդ արարածին որչափ
 եղած էր արդէն ո՛ր և է անորժաշամ պտուղի
 Բոյսերու կեանքը, որ այնքան նրբին, այն-
 քան փափուկ ու գիւրաբիկ է, չկատող հո-
 տանք մ'ունի սակայն երկրի ամէն մասերուն
 վրայ, բոլոր հողամասը կեանք մ'է ինքնին
 ապ'որ Մայրսին մէջ, անզուսպ և անբա-
 ցատրելի ձգտում մը ըլլալու, ապրելու և
 բողմանալու : Պարզ պտոյտ մը դէպի դաշ-
 տերը, հովիտները, անտառներն ու լեռնե-
 րը, ուշադիր միտք մը քննելու պիտի պտը-
 ղին մեր աչքին առջև բուսական կեանքի
 այն ալազանութիւնը, որով կը պատկերա-
 նայ երկրին մակերեսը, անցնելով բեղուն
 ու պարարտ հողերէն, ջրաբեր գալտաւայ-
 րերէն, յուռթի ձորամէջերէն պիտի հանդի-
 պինք քարերուն, որ կեանքերու խարխու-
 ներ են, ժայռերու որոնց երեսին ինքնակոչ
 մամուռը փաթթուած կփցած է իր գոյու-
 թիւնը պաշտպանելու համար, մեծածաւալ
 ու կիւրծաններուն ալիքաւոր անդնդոց խորու-
 թեան որոշ մէկ աստիճանին վրայ դարձեալ
 գոյութիւն ունին անոնք : Լեռներուն խո-
 տորները, ժայռերուն ստորոտները առա-
 պորներու ծերպերը, ուրկէ ձիւնը իր ոտքը
 կը քաշէ բուսականութիւնը իր թարմ կեան-
 քի ներկայութիւնը կը դնէ : Փափուկ ձիւ-
 նածաղիկը, կարմիր կակաչը, անմուկները
 խոտերն ու մացառները, ասոնք ամէնքը
 վայրենի բնութեան, անմշակ հողամասին
 հրաշագեղ կեանքերն ու զարդերն են : Ա-
 ռանց այս սիրուն կեանքերուն ո՛չ մէկ հը-
 րապոյր կամ հաճոյք պիտի չունենար մեր
 հողագունդը : Բուսական կեանքի այս հա-
 մայնութիւնը Արարչագործութեան ամենա-
 գեղեցիկ բանաստեղծութիւնը կը յօրինէ
 քանի որ կեանք և բանաստեղծութիւն ի-

րարմով են ու իրարու մէջ, անի յաւիտե-
 նական երգը կամ տաղը պիտի մնայ բնու-
 թեան, որուն քով կը տկարանայ մտքի ա-
 մենէն զօրաւոր բանաստեղծական արտա-
 յայտութիւնը :

Ան է մեր սրբազան մատենար, մեր բա-
 րեկամը հաւատարիմ, որ մեր ողջութիւնը
 հաճոյալի ընելէ ետք ալ մեր հայրերուն,
 մայրերուն և ամէն սիրելի սրտահատորնե-
 րուն գերեզմանական ամալութիւնը կը լեց-
 նէ, միշտ յոյսի նշող մը կեանքի ճառա-
 գայթ մը պահելով այն հողակոյտերուն մէջ
 ուր կը հանգչին անոնք :

Բուսական աշխարհի մէն մի՛ տունկը,
 ծլօտը կամ ծիւր գեղեցկութեան ու գոյու-
 թեան հրաշալիք մ'է ինքնին :

Տ ԳՕՉՈՒՆԵԱՆ



Մ Ե Կ Ն Ո Ւ Մ

Թերթիս Տնօրէն-Խմբագիրը Վահան
 Էֆ. Փափաղեան Երեւոյսի օր ի լմիտ
 ուղիորեցաւ որիկէ զրօսական պտոյտ մը
 պիտի կատարէ մինչև Ատա-բաղար ու
 Պարտիզակ :

Զ Ե Կ Ո Յ Ց

Հանրագիտակ այս օրուրնէ սկսեալ
 կը տպագրուի Պապը Ալի ճատտէսի թիւ
 32 ձիւնը Տպարանին մէջ, ուր կը տըպ-
 ուին նաև ամէն տեսակ տպագրական
 գործեր՝ մաքուր և խնամուած տպագ-
 րութեամբ :

Գաւառներէն ալ յանձնարարութիւնք
 կ'ընդունուին :

Արժօնատէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ-Ալի Գաւառի Թ. 32

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՐԱՊԵՏԱՆԻ ԿԱՆԱԿԱՆ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Համալ, Թօփալեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանքայ տու-
կանութեամբ եւ գիներու անմրցելի ա-
ժանութեամբը շահած է բոլոր իրեն գի-
մող յաճախորդաց վստահութիւնը, այս
անգամ ձմեռուան յատուկ ընտիր հա-
գուստներու, կանանց քէյրոնիներու եւ
տղայոց շիք եւ գիմաղկուն փօքիւններու
նոս ամբարձր մը պատրաստ ունի, որ
շերմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նոնց, որոնք պէտք ունին ներկայ եղա-
նակին հաղուտի եւ ուրիշ նմանօրինակ
պիտոյից .

աակՍրկո լթիւն չկայ, թիւը 2 զրչ է.
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին .

37—50

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Սժան, լուսաւոր, շուտ կը չորնան,
վրայ չեն ելներ, գոյներնին չեն նետեր,
ջուրի եւ անձրեւի կը դիմանան, մլուկ-
ները կը ջնջեն ելն. ելն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր
քառ. արշընը 10—15 փարայ .

Ներսի եւ գուրտի ներկերուն իւրա-
քանչիւր քառ. արշընը 20—30 փարայ :

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախոր-
դաց դիւրութեան համար, վաճառա-
տունս պատրաստ է սոյն զնեւոյ իր վը-
րայ առնել ամէն դործ, թէ ներին եւ
թէ գործաւորողէի մէջն ըլլալով :

Թուրքիոյ միակ կեղ րանատեղին

Կ. Պոլիս, Սլաճա-համամ, Պաղըր-
ճըլար թիւ 26, Գ. Աճէմեան : — Գա-
ւառները գործակալներու պէտք կայ,
դիւրամատչելի պայմաններով :

1—20

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԼՏ ԹԵՅԵՐ

Կ. Պոլիս, ՊահճեԳափու, Ճեղալ-Պեյ խան, քիւ 10



Ա Ն Տ Ե Լ Ի Պ

Վ Ա Ժ Ա Պ Ա Տ Ո Ւ Ն

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՅ ԵՒ ՊԻՏՈՅԻՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ռ Ա Բ Ա Ր

Ֆոնոկրամփի եւ Գլաններու Կրամֆոնի
եւ երկկողմ Բլագներու, Կեդրոնա-
տեղի Պահճե Գաբու, Հաճի Պեքիր
Էֆենտիի կից, Եալուզ խանի տակ
քիւ 2: Մասնաճիւղ Պահճե Գաբու
քիւ 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
զրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ճայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Դաւառներէն եղած յանճարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
Կեդրոնատեղին: